



11. ՄԱՐԳՐԻՏԱՅԱՐ ՇԱՊԻՆ

Ժուկով ժամանակով շեն Մանծկերտ քաղքին մոտիկ Ակնեբ անունով գեղի մեջ կնիկ մե կապրեր հըտ ուր մեկուճար տղին: Էդ կնիկ շատ խեղճ կէղնի, տղեն օր կը հասնի՝ կը ճամպե հորթարած:

Օրերուց օր մե՝ էդ տղեն դռեսի հորթիկ կը կորցու. ոես, դու. ոես, կը բռնե ըդոր աղեկ մե կը ծեծե, կըսե.

— Զհորթիկ գտի, թե չէ՝ քըղի կսպանիմ:

Դես հորթիկ, դեն հորթիկ, չը դտվի: Տղեն կը շոքի, աղոթք կէնե.

— Յա՛ ատենահաս բող ձիավոր սուրբ Սարգիս, դու հասնիս քնձի:

Կըսե, չըսե՝ մեռնիմ ուր ղորաց, սուրբ Սարգիս կը հասնի, կառնե ղտղին կը դնե ուր ձիու թարք, կը տանե հասու Մսըր, կը կարգե Մսրա թագավորի աղջկա հետ, պատվիրանք կիտա, օր քնելուց յանեջ՝ յըմնօր աղոթք էնե:

Ժամանակ մե դընցնա, մեկ յիրկուն՝ տղեն ղպատվիրանք կը կոտրե, կը մոռնա աղոթք էնե, կը քնի, առավոտուն աչք օր կը բանա՝ կը տեսնա հանդե մըջ ուրանց հին տան շոր խսրի վրա պարկուկ է: Էդի ուր հետ բերած կէղնի մարգըրտաշար շապիկ մե, ոեսի ահուց քնքն ու մամ զէդ շապիկ կը պահին, օր շիդա տանե հորթկա տեղ:

Մենք էրթանք Մսըր:

Ին ամիս, ին օր, ին դախա օր կը թմի, Մսրա թագավորի աղջիկ կը պարկի, խորոտ տղեմ՝ կը բերե, հմա էդ տղեն գիշեր ու ցե-

րեկ գիլա, կը խժա, ինչ կէնին-չէնին՝ շըն կոնա ձեն կտրի: Թագա-
վորի իմաստուններ ժողովք կէնին, խորուրդ կիտան աղջկան, օր բո-
լամա օսկի վերցու հըտ ուրին, ձին հեծնա, էրթա էրկրոց էրկիր՝
հա՛մ աշխար տեսնա, հա՛մ քաղքըներ ու կարմընջներ շինե, բալթի
աստօնու գութ շարժե, էրեխեն ձեն կտրե:

Թագավորի աղջիկն է, գիկա հասնի Շամ ու Հալար, Դիարբե-
քիր, Սասուն-Խութ, գիջնա Մշու դաշտ, գիկա՛-գիկա՛, կը մտնա՝
Մանժկերտու Ակնեք գեղ, կը կանի, վըր Մուրատ գետին մեծ կար-
մունջ մե կը թալե: Որ անգործ էր՝ գործի տեր կէղնի, որ անոթի էր՝
կը կշտանա:

Խեղճ ու կրակ կնկա տղեն լե գիկա խառվի հըտ ուրանց, կը
դատի-բանի, ուր փարեն կառնե, չիրկուն կէրթա տուն: Թագավորի
աղջիկն ու ըզի գիրար շըն ճանչնա, սուրբ Սարգիս ըդոց աչքեր ու
միտք մթներ էր, շըմքի զպատվիրանք շըն սլահերի:

Թագավորի աղջիկ ըդոց օր կը բերե բանցու՝ ուր միտքն ուրիշ
էր՝ հրամանք կիտա մեծ ու պզտիկ բանողներուն, Եր մեկ-մեկ մըտ-
նան ուր յոգեն, դտղին օրորին, նոր էրթան ուրանց տներ: Կնկա
տղեն լե գիկա, օր զէրեխեն օրորե, ձեռ կը թալե-չը թալե՝ էրեխեն
ուր ձեն քը՛ոթ կը կտրե: Զտղի ձեռք բռնած՝ կը տանին մըտ թագա-
վորի աղջիկ:

— Դու ո՞ն իս,— կը հարցու աղջիկ:

— Ես մեր գեղի հորթարածն ենք, բան ու զործ շունենք, քու
սադաղեն ապրուստի տեր էղա:

— Աղեկ,— կըսե թագավորի աղջիկ,— վաղ էլման գիկաս, դիմ
էրեխին օրորիս:

— Վըր իմ աչաց,— կըսե տղեն:

Տղեն օր կէրթա, էրեխեն ձեն կը թալե գլուխ՝ համա՛լ գիլա ու կը
խժա, օր մարդիկ դուրանց յանկըջներ կը բռնին, ինչ կէնին-չէնին՝
չարա շէղնի, դիլա ու կը խժա: Թագավորի աղջիկ կըսե.

— Շուտ գացեք զհորթարած բերեք:

Կէրթան զհորթարած կը բերին: Ձեռ կը թալե-չը թալե՝ էրե-
խեն զձեն կը կտրե: Աղջիկ ըդոր բոլամա օսկի կիտա, կը խնդրվի,
օր մնա օրորոցի կուշտ, համ էրեխեն չիլա, համ յանկըջներ կը խա-
խընդին:

Տղեն կըսե.

— Քու հրամանք վըր իմ գլխուն, համ շըմ կոնա մնա:

— Յորի՞ն,— կըսե թագավորի աղջիկ:

• Ուղղված է բանահավաքի կողմից հասնիլն՝ մտնա բառով (Մ. Կ.):

— Ի՞մ մամ պառվեր է, մինակ է, առանց ընձի չը կոնա դախե մե մնա:

— Աղեկ, գնա՛, — կըսե թագավորի աղջիկ:

Տղեն դըռ յոտք չըր թալի, խժխժուն կը բռնե աշխար: Թագավորի աղջիկ կը շիվրի մնա, կը նստի կուշտ մե գիլա, ուր բախտ կանխե, չը դինա ինչ էնե: Էլման կը կանչե զտղին: Տղեն դիկա, էրեխեն ձեն կը կտրե: Էդի մեկ դեն կօրորե, թագավորի աղջիկ մեկ դեն կը փաթվի ըդոր, անուշ-անուշ խոսքեր կըսե, համ տղեն՝ հե՛, կը ծիծուա մըջ ուր մտքին:

՝Իրկուն մե՛ մամուն կըսե.

— Սա՛րե, չըմ հասկընա իդա հրաշք. խըլղ կօրորե՛ էրեխեն ձեն չը կտրե, կը խժա՛ ու կը խժա՛, ես կօրորիմ՝ ձեն քը՛ոթ կը կտրե, էդ յորի՛ն:

— Էդի մինակ աստված դինա, լա՛ո, — կըսե մամ, — հուլածին չը կոնա յիմնա:

— Սա՛րե, — կըսե տղեն, — թագավորի աղջիկ ընձի շա՛տ անուշ կիշկե, մըզի բուլամա փարի տեր էրեց, մե՛նք ինչ էնինք.

Մամ կըսե.

— Լա՛ո, արի իդա մարգըրտաշար շապիկ տուր ընդրան՝ թըլ հագնի, հա՛մ լավութեն էրած կէղնինք, հա՛մ կը պրծնանք ոեսի ահուց:

— Խելոք խորուրդ է, — կըսե տղեն, — ոես օր մե կոնա յիգա, խլե տանե:

Մամ ձեռաց գելնա, զմարդըրտե շապիկ կը ծալե-ծալծլե, կը փաթե նըխշուն յազմի մեջ, կը դնե տղի չանթետակ, կը ճամպե մըտ թագավորի աղջիկ: Տղեն օր կը մտնա չօդեն, էրեխեն դձեն կը կտրե, օր կը կտրե՝ կը բացե յազմեն, զմարգըրտաշար շապիկ կիտա աղջըկան, օր կիտա՝ փրուզեն կը բացվի, սուրբ Սարգըսի զորութենով զիրար կը ճանչնան: Զէրեխեն կը գրկին, գիկան մամու մոտ, կառնին ըդոր, կը դառնան Մսըր: Տղեն կը դառնա թագավոր, աղջիկ կը դառնա թագուհի:

Ատենահաս բոզ ձիավոր սուրբ Սարգիս, մեռնիմ ուր զորաց, թըլ հասնի հեթիաթ ըսողին ու չանկաջ էնողին: Ա՛մեն:

